ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՅՈՒՆԱՐԱՆ ԴՊՐՈՑԸ

ԵՒ

ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

(Շարունակութիւն։)

§ 29. Որ "Ամելխոյը, ե՞ Էլիասի յիշատակած Յամբղիքոս մեկնիչը եւ Դաւիթ Անյաղթին վերագրուած Ստորոգութեանց ու Պերիարմենիաս գրոց մեկնութիւնների հեղինակ "Ամելխոյսը, միեւնոյն անձնաւորութիւն են, հաստատւում է "Ամելխոյսի" մեկնութիւնների բովանդակութեան քննութեամբ։

Յամբղիքոսը չէր ընդունում, ինչպէս ասացինք, Աղեքսանդրոս Ափրոդիսեցու, Պորփիւրիոս եւ Հերմինոս մեկնիչների կարծիքը Արիստոտէլի Ստորոգութեանց "դիտաւորութեան" մասին։ Աղեքսանդրոսը Ստորոգութեանց "դիտաւորութիւնը" բացատրում էր, իբր "ձայնից" միայն քննութիւն, Պորփիւրիոսը՝ "մտածութեանց", իսկ Հերմինոսը՝ "իրողութեանց"։ Յամբղիքոսը, հակառակ սրանց, կարծում էր, որ Ստորոգութեանց "դիտաւորութիւնն" է եւ "ձայնից" եւ "մտածութեանց" եւ "իրողութեանց" քննութիւնը[1]։

Արդ՝ "Ամելխոյսի" Ստորոգութեանց Լուծմունքը սկզբից մինչեւ վերջը հաւատարիմ է մնում Յամբղիքոսի այդ սկզբունքին եւ "Ամելխոյսը" մեկնում է Արիստոտէլի երկը, ելակէտ ունենալով հենց նոյն այդ տեսակէտը։

Դաւթի ու Էլիասի երկերում բազմաթիւ վկայութիւններ կան թէ հին եւ թէ իրանց ժամանակակից մեկնիչների երկերից, սակայն "Ամելխոյսի" Ստորոգութեանց եւ Պերիարմենիաս գրոց մեկնութիւններում յիշւում են միայն մի ոմն մեկնութիւններում յիշւում են միայն մի ոմն Դէմոս, որը հաւանաբար Սուիդասի յիշատակած քերական Եւդեմոն է (երրորդ դարի հեղինակ Ք. յ.) եւ հռչակաւոր Աղեքսանդրոս Ափրոդիսեցին, որն ապրել է երկրորդ դարի վերջում եւ երրորդ դարի սկզբում Քրիստոսից յետոյ։ "Ամելխոյսի" մեկնութիւններում չենք հանդիպում քաղուածքների ու վկայութիւնների Աղեքսանդրեան դպրոցի նորագոյն մեկնիչների երկերից։ Այս հանգամանքը կարող է անշուշտ նշան համարուել այդ մեկնութիւնների հնութեան։ Եթէ "Ամելխոյսը" Պորփիւրիոսի աշակերտ Յամբլիքոսն է, այդ դէպքում ըստ ինքեան հասկանալի է, թէ ինչու Ստորոգութեանց եւ Պերիարմենիաս գրոց մեկնութիւններում, որոնք գրուած պիտի լինին չորրորդ դարի սկիզբներում, չէին կարող յիշուել հինգերորդ դարի մեկնիչներ։

Նշանաւոր Յամբլիքոս ասորին, որ Պորփիւրիոսի աշակերտն էր Հռոմում, շատ հաւանական է, որ գրած լինէր արիստոտէլեան երկերի մեկնութիւններ, ինչպէս ենթադրում է Վ. Վինդելբանդը իր "Հին փիլիսոփայութեան պատմութեան" մէջ[1]։

Urbinas 35 յունական ձեռագրում, որի մէջ հաւաքուած կան քաղուածքներ զանազան մեկնիչների երկերից, գտնում է մի հատուած Յամբլիքոսից, որ յիշում է Ա. Բուսսէն Էլիասի յունարէն հրատարակութեան առաջաբանում (էջ XXI)։ "Maximam autem admirationem mihi movit, — ասում է Բուսսէն —, Jamblichi nomen expositioni quae est de substantia praepositum (f. 28ᵛ): ἐκ τῶν ἰαμβλίχου. ἀπορήσειεν ἄν τις, πῶς οὐχὶ καὶ ἄλλοις πλείοσιν ὑπάρχει τοῦτο τὸ ἴδιον κτλ. Sed accuratius quaerenti mihi persuasum est illam notam omni fide carere. Nam quae sequitur interpretatio ex Simplicii commentario videtur excerpta esse eodemque ex fonte Jamblichi nomen haustum"։

Ա. Բուսսէն այդ հատուածը վերագրում է Սիմպլիցիուսին, որովհետեւ նրան անյայտ է եղել, նոր այս ենթադրութիւնը, որ Ստորոգութեանց եւ Պերիարմենիաս գրոց մեկնութիւններ կարող էր գրած լինել նաեւ Յամբլիքոսը։ Սակայն "Ամելխոյս"-Յամբլիքոսի մասին վերոյիշեալ մեր դիտողութիւնները, որ հիմնուած են իմաստասիրական հայ ձեռագիրների վկայութիւնների վրայ, կարող են նոր լուծումն տալ Արիստոտէլի մեկնիչների վերաբերեալ որոշ խնդիրներին, ուստի անհրաժեշտ է քննութեան

---

1 Փոխանակ "ձայնից, մտածութեանց եւ իրողութեանց" տերմինների Ամելխոյսի թարգմանը գործ է ածում "ձայն, իմացումն եւ իր"։ Լեզուի այս տարբերութեան խնդիրը յատուկ քննութեան ենք առնելու սոյն աշխատութեան յաջորդ մասում։

1 Տե՛ս W. Windelband, Geschichte der alten Philosophie, Zweite Auflage, München 1894, էջ 223.

առնել նորից յունական ձեռագիրները որոնք թերեւս հնարաւորութիւն տան վերջնականապէս պարզելու մեր յարուցած խնդիրը։

Եթէ Ստորոգութեանց եւ Պէրիարմենիաս գրոց մեկնիչը Յամբլիքոս ասորին է, պարզ է, որ նրան չի կարելի նոյնացնել Պրոկղի Դիադոխոսի լուծմունքի հեղինակ "Ամելաիսաս„ի հետ, որովհետեւ ինքը Պրոկղը հենգերորդ դարի հեղինակ է։

§ 30. Մի քանի դէպքերում "Ամելիոս„-Յամբղիքոսի մեկնութիւնների բովանդակութիւնն մասին։ — "Ամելխոյս„-Յամբղիքոսի Ստորոգութեանց եւ Պէրիարմենիաս գրոց Լուծմունքները գրի առնուած դասախօսութիւններ են, ինչպէս եւ Նորպղատոնական Դաւթի ու Էլիասի մեկնութիւնները։ Այդ պարզ երեւում է նոյն լուծմունքների ներքին բովանդակութիւնից եւ գրի առնողի յաճախ կրկնուող խօսքերից, ինչպէս՝ "ասացաւ մեզ յառաջագոյն„ (Մեկն. Ստոր., էջ 422), "յաղագս որոյ նայլս ճառելի է„ (էջ 431), "ճառեսցի յիւրում տեղւոջ„ (էջ 433), "ճառեցաւ մեզ„ (Մեկն. Պէրիար., էջ 487), "որպէս ունիմք ուսանել (էջ 500), "յառաջագոյն ասացան մեզ պատճառք„ (էջ 505), "որպէս ուսաք„ (էջ 521) եւն։

Լուծմունքների հեղինակը յիշում է Արիստոտէլի միւս երկերից՝ "Բնական լսաւղութիւնք„ (Φυσικὴ ἀκρόασις), "Յետ բնականացն„ (Μετὰ τὰ φυσικά), "Յաղագս անձին„ (Περὶ ψυχῆς), "Բնական տեսութիւնն„ (հաւանաբար՝ Τὰ φυσικά), տրամաբանականացն գիրք (Τὰ διαλογικά) եւ ընտելական իրողութիւնք (*)։

Ուշադրութեան արժանի է, որ "Ամելխոյս„-Յամբղիքոսը հակաճառում է երբեմն պղատոնական մեկնիչներին եւ Պղատոնին, ինչպէս այդ երեւում է հետեւեալ հատուածներից։

Ստոր. Մեկն., յաղագս քանակի, պր. ա՝։

"Իսկ ոմանք ի Պղատոնականացն կամին ասել, եթէ վասն զի հարկ է յամենայն գոյացութիւն ընդունել զքանակն ոչ ըստ չափոյ միայն, երբ թէ մեծ կամ փոքր, այլ յաւէտ ըստ թուոյ, զի կամ մի է կամ բազում։ Առ որս ասեմք, եթէ ձեզ իսկ հակաճառութիւնս կազմիք. քանզի ըստ Պիթագորականացն ձեւացեալք ասէք թէ միոն ոչ է թիւ, այլ յաւէտ սկիզբն թուոյ. իսկ զոր ոչ թիւ ասացիք՝ այժմ քանակ ասէք եւ թիւ նշանական, որպէս թէ ըստ ձերում բանակցութեանդ եղիցի միակն միանգամայն թիւ եւ ոչ թիւ, որ է անհնար„։

(*) Յեն Էջմիածնի մատենադարանի ձեռագիր թ. 1889 կամ 1943։

Մեկն. Պէրիար., էջ 507 (Վենետ., 1833)։

"Առ Պղատոնի ինձ թուի ի տեղւոջս կռիւ. քանզի որպէս նա կամի՝ բնութեամբ բան ի մեզ է, վասն զի գործի է բանական զօրութեան. որպէս է ակն՝ տեսութեան գործի. եւ այլ ինչ զգայարան՝ իւրաքանչիւրոցն. բայց սուտ ասացեալն. քանզի առնու ներգործութեամբ եւ զօրութեամբ՝ իբրեւ զնոյն„։

Այս հատուածները, որոնց մէջ արտայայտուած են "Ամելխոյսի„ ուրոյն հայեացքները, կարօտ են յատուկ քննութեան յունաց իմաստասիրական մատենագրութեան աղբիւրների օգնութեամբ։

§ 31. Վիեննայի թ. 112 ձեռագրում յիշած "Անդրոնիս Էրմիս„, կարելի է ենթադրել, որ Յամբղիքոսի Անդրոնիկն է։ — Վիեննայի Մխիթարեանց թ. 112 ձեռագրում, ինչպէս վերեւ յիշեցինք, Ստորոգութեանց մեկնութեան մեծագոյն մասը, առընչի մեկնութիւնից սկսած մինչեւ վերջը, համարւում է "Անտոնիոս Էրմիսի„ աշխատութիւն։ Այդ ձեռագրում "Յաղագս առընչի„ միկնութիւնն ունի վերնագիր՝ "Անտոնիոս Էրմիս է ասացեալ զթարգմանս„, "Յաղագս որակի եւ որակութեան„ մեկնութեան վերագրում նոյնպէս յիշւում է, որ "Անտոնիոս Էրմիս թարգմանէ„։

"Թարգման„ եւ "թարգմանել„ պէտք է հասկանալ ըստ երեւոյթին "մեկնիչ„ եւ "մեկնել„ իմաստով։

Արդ՝ եթէ Ստորոգութեանց մեկնութեան վերոյիշեալ մասերի մեկնիչն "Անտոնիոս Էրմիսն„ է, հարց է ծագում, թէ արդեօք չէ կարելի պարզել նրա անձնաւորութիւնը, ի նկատի ունենալով, որ նա եւս պէտք է լինի "Ամելխոյս„-Յամբղիքոսի ժամանակակից մեկնիչներից։

Որքան ինձ յայտնի է, Անտոնիոս անունով մեկնիչ իմաստասիրական մատենագրութեան մէջ ծանօթ չէ ոչ Յամբղիքոսի ժամանակ, ոչ էլ յետոյ։ Աչքի առաջ ունենալով, որ Յամբղիքոս անունն աղճատուել է հայերէնում եւ ստացուել "Ամելխոյս„ աղճատ անունը, նոյնը թերեւս կարելի լինի ենթադրել եւ Անտոնիոս անուան նկատմամբ։

Այդ դէպքում, թոյլ ենք տալիս մեզ ենթադրելու, որ Անտոնիոս կարող է հայերէնում աղճատումն լինել Անատոլիոս անուան, իսկ Անատոլիոսը, ինչպէս յայտնի է, Յամբղիքոս ասորու ուսուցիչն էր։

Այս ենթադրութիւնը կարող է թուել համարձակ եւ կարօտ դրական ապացոյցների։

Այդպիսի ապացոյցներ մենք չունենք։ Սա-

կայն եթէ ուղիղ համարուի մեր ենթադրութիւնը, որ "Ամելխոյսը„ Յամբղիքոս ասորին է, այդ դէպքում՝ առանց այլ ապացոյցների եւս ընդունելի պիտի լինի եւ մեր այս ենթադրութիւնը, որ Յամբղիքոսի ժամանակակից, միեւնոյն դպրոցի ու խմբի մեկնիչ, "Անտոնիոս Երմիսը„ ամենայն հաւանութեամբ կարող է լինել հենց նրա ուսուցիչ Անատոլիոսը, որի անունն աղճատուած է հայ ձեռագիրներում։

Որեւէ ուրիշ վկայութիւն կամ ակնարկ այս խնդրի լուսաբանութեան համար պէտք է որոնել եւրոպական գրադարաններում գտնուող յունական փիլիսոփայութեան վերաբերեալ ձեռագիրներում։ Եւ եթէ գտնուի այդպիսի մի վկայութիւն ու հաստատուին վերոյիշեալ մեր ենթադրութիւնները, այդ դէպքում լուծուած կը լինի Արիստոտելի մեկնիչների նկատմամբ կարեւոր մի խնդիր եւ Դաւիթ Անյաղթին վերագրուած Ստորոգութեանց եւ Պերիարմենիաս գրոց մեկնութիւնները, որ թարգմանուած են յունարէնից, կը կազմեն Անատոլիոս-Յամբղիքեան մեկնութիւնների յատուկ ու նոր մի խումբ՝ գրուած չորրորդ դարում Ք. յ.։

Դրանց հայերէն թարգմանութիւնը, ինչպէս կը տեսնենք, միանգամայն տարբեր է Դաւթի ու Էլիասի թարգմանութիւններից եւ արտադրութիւն է յունաբան տարբեր ու առանձնայատուկ դպրոցի։

§ 32. Նէ-Ռի դասաւորութիւնը ե՝ մեկնութիւն յեւ ի՝ կարգն Ամելխոյս Յամբղիքոսի մեկնութիւններում։ — Ամելխոյս-Յամբղիքոսի մեկնութիւններում Նիւթի դասաւորութիւնը եւ մեկնութեան ձեւն ու կարգը բոլորովին այլ են, քան Էլիասի ու Դաւթի մեկնութիւններում։

Ոլիմպիոդորոս-Էլիասի խմբի մեկնութիւններում Պորփիւրի ու Արիստոտելի բնագիրը մեկնւում է "պարաֆրազների„ ձեւով, այսինքն՝ բնագրից առաջ են բերւում առանձին նախադասութիւններ, որոնք կարօտ են բացատրութեան, եւ մեկնւում։ Այս կարգի մեկնութիւններում շատ յաճախ դժուար է լինում որոշել, թէ ո՞րտեղ է վերջանում Արիստոտելի բնագիրը եւ ո՞ր տեղ սկսում բնագիրը։ Այս ձեւով կազմուած եւ Ալֆարաբիի միջնադարեան մեկնութիւնները։

"Ամելխոյս„-Յամբղիքոսի լուծմունքները բոլորովին այլ ձեւով են կազմուած։ Արիստոտելի բնագիրն այստեղ բաժանուած է պրակների եւ ամէն մի պրակ առանձին առաջ է բերւում in extenso "բան„ վերնագրի տակ, իսկ իւրաքանչիւր պրակի համապատասխան քննութիւնը, բաժանուած Արիստոտելի բնագրից, առաջ է բերւում "մեկնութիւն„ վերնագրի տակ։

Մեկնական այս ձեւը միջնադարեան մեկնիչներից գործ է ածել Իբն-Ռոշտը (Ավեռոէսը)։

Էրնեստ Ռենանի կարծիքով[1], մեկնական այս վերջին ձեւը գործածական է Ղուրանի մեկնիչների մօտ եւ իբր թէ սրանցից է փոխառել այդ ձեւը Իբն-Ռոշտը։ Ինձ թւում է, որ Է. Ռենանի այս ենթադրութիւնը հիմնաւոր չէ։ Մեկնական այդ ձեւի գործածութիւնը "Ամելխոյս„-Յամբղիքոսի լուծմունքներում պարզ մի ապացոյց է, որ մեկնական այդ ձեւը, հաւանաբար, իրանք Ղուրանի մեկնիչները փոխ են առել Արիստոտելի հնագոյն մեկնութիւններից։

Յամենայն դէպս՝ Դաւթի ու Էլիասի եւ "Ամելխոյս„-Յամբղիքոսի մեկնութիւնների արտաքին ձեւն ու եղանակը, որ իրարից հիմնովին տարբեր են, պարզ մի նշան են դարձեալ, որ այդ մեկնութիւնները իմաստասիրական տարբեր դպրոցների ու հաւանաբար տարբեր ժամանակների գործ են։

Հնագոյն թարգմանութիւնների երեք տարբեր շրջանները։

§ 33. Իմաստասիրական հնագոյն մեկնութիւնները թարգմանուած են յունարէնից։ — Հայոց մատենագրական աւանդութիւնը, ինչպէս տեսանք, իմաստասիրական գրեթէ բոլոր մեկնութիւնները համարել է Դաւիթ Անյաղթ հայ փիլիսոփայի աշխատութիւն։ Մատենագրական այդ աւանդութեան հետեւելով, հայագէտ բանասէրները եւս ընդունում էին, որ այդ երկերը հինգերորդ դարում հայերէն գրուած աշխատութիւններ են եւ ոչ թէ թարգմանութիւն յունարէնից։

Այդ սխալ ու շփոթ ենթադրութիւնը եղել է գլխաւոր պատճառը, որ իմաստասիրական մեկնութիւնների հայերէն թարգմանութեան խնդիրը ոչ միայն չէ ուսումնասիրուել, այլ նոյն ինքն այդ խնդիրը երկար ժամանակ կասկածելի ու վիճելի համարուել աւանդապահ բանասէրների կողմից։

Որ իմաստասիրական հնագոյն հայ մեկնութիւնները բոլորն էլ թարգմանուած են յունարէնից, այդ այլեւս վիճելի մի ենթադրութիւն չէ։

[1] Տե՛ս "Тизнь и произвегеніи Аверроэса„, էջ 43—44 (Собраніе сочиненій Э. Ренана. Толъ VIII., Кіевъ, 1902).

Դաւիթ Անյաղթին վերաբերեալ առասպելեալ աւանդութիւնը գրական փաստերով մերժուելուց յետոյ, այդ խնդիրը կարելի է համարել վերջնականապէս ապացուցուած ու լուծուած։

Իմաստասիրական հնագոյն մեկնութիւնները, ինչպէս տեսանք, զանազան հեղինակների յունարէն գրուած դասախօսութիւններ են։ Այդ հեղինակերն են՝ Ոլիմպիոդորոս-Էլիասը, Նորպղատոնական Դաւիթը, Յամբղիքոսը եւ հաւանաբար նաեւ Անատոլիոսը։

Չունենալով գրական ու ճշգրիտ տեղեկութիւններ սրանց մեկնութիւնների հայ թարգմանիչների մասին, հայ բանասիրութիւնն անկարող է գտնուել որոշելու ոչ միայն այդ երկերի թարգմանման ճիշդ տարեթիւը, այլ անգամ դարաշրջանը։

Այսքանը միայն պարզ է, որ Դաւթի ու Ոլիմպիոդորոս-Էլիասի խմբի մեկնութիւնները չեն կարող յօրինուած, ուրեմն եւ թարգմանուած լինել հինգերորդ դարում, ինչպէս այդ վկայում է մեր մատենագրական աւանդութիւնը։ Այդ պարզ ու անվիճելի է, որովհետեւ այդ մեկնութիւնները վեցերորդ դարի մեկնիչների աշխատութիւն են։

§ 34. Ո-ՍՈ-ՆՈՍԻՐՈՒԹԻՒՆ ԻՆՉ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՆԱՐԱՒՈՐ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՀԵՏԳԵՏԻՏ ՈՉՈՒՆԱԲԱՆ ՀՆԱԳՈՅՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ։ — ՀԱՅ ՀՆԱԳՈՅՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԱՋՈՐԴԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՄԻՆՉԵՒ ԱՅԺՄ ՄՆՈՒՄ Է ՄԵԹ ՈՒ ԱՆՈՐՈՇ։ ՄԻՆՉԵՒ ԱՅԺՄ ՉԷ ՅԱՋՈՂՈՒԼ ՆԱԵՒ ՈՐՈՇԵԼ ՅՈՒՆԱԲԱՆ ՀՆԱԳՈՅՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ։

Հայկական աւանդութեանը հետեւող բանասէրներն այդ թարգմանութիւնների ժամանակը համարում են հինգերորդ դարի վերջը, շատերը նոյն թարգմանութիւնների ժամանակը տանում են մինչեւ ութերորդ, իսկ ոմանք՝ վեցերորդ կամ եօթներորդ դարը։

Մեծ մասամբ այդ ենթադրութիւնները աւելի անձնական տրամադրութեան ու քմահաճոյքի վրայ են հիմնուած, քան լուրջ ու գրական հիմքերի։ Հայ մատենագրական աւանդութիւնը, որ քննութեան էի առել Դաւիթ Անյաղթի խնդրին նուիրուած աշխատութեանս մէջ, բացի յետնադարեան առասպելախառն յերիւրանքներից չունի յունաբան մատենագրութեան մասին գրական ու հաստատուն ցուցումներ։

Հայ մատենագրութեան հիմնական այս խնդիրը լուսաբանելու համար անհրաժեշտ էր գտնել ուսումնասիրութեան ուրիշ ուղիներ։

Ինչպէս կը տեսնենք, այդպիսի հնարաւորութիւններ կան, բայց պահանջում են յունաբան թարգմանութիւնների բովանդակութեան, լեզուի եւ քերականութեան մանրազնին քննութիւն եւ վարժ հմտութիւն։ "Արտաքին գրոց" զանազան երկերի քննութիւնը լեզուական ու քերականական տեսակէտից պէտք է կատարուի ոչ միայն ամէն մէկ երկ առանձին, այլ եւ համեմատութեամբ մէկը միւսի հետ։ Ուսումնասիրութեան այդ եղանակով ստացւում են մի շարք կարեւոր ու հետաքրքիր հետեւութիւններ, եւ եթէ այդ ուղղութեամբ լինին նոր եւ նոր աշխատողներ, կարծում եմ, որ յունաբան դպրոցի գաղտնիքը վերջնականապէս կը պարզուի։

Յունաբան հնագոյն թարգմանութիւնների ժամանակը որոշելու համար սոյն աշխատութեանս մէջ քննութեան եմ առել լեզուական ու քերականական տեսակէտից ոչ միայն Արիստոտէլի երկերի ու Պորփիւրի Ներածութեան մեկնութիւնները, այլ եւ Փիլոնը, Պիտոյից գիրքը, Դիոնիսիոս Թրակացու քերականութիւնը, Նոնոսը, Իրենէոսը, Գիրք Թղթոցի հնագոյն մասի յունաբան թղթերը եւ Տիմոթէոս Կուզի հակաճառութիւնը։

Հարեւանցի կերպով քննել եմ նաեւ Խոսրովիկ թարգմանչի եւ Անանիա Շիրակացու երկասիրութիւնները ապացուցանելու համար, որ իմաստասիրական երկերի, եթէ ոչ բոլորը, գոնեայ մեծագոյն մասը՝ թարգմանուած են նրանցից առաջ։

§ 35. ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՐԸ ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՐՕՆԱԴԱՒԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՈՒԱԾՔՆԵՐՈՒՄ։ — ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻՑ ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՐՕՆԱԴԱՒԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՈՒԱԾՔՆԵՐԸ ՄԵԾ ՉԱՓՈՎ ԿՐՈՒՄ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԻՍՏՈՏԵԼԵԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐ։ Այդ ազդեցութիւնն այնքան ակնյայտնի ու անվիճելի է, որ աւելորդ է երկար կանգ առնել այդ խնդրի վրայ։ Բաւական է առաջ բերել բազմաթիւ վկայութիւններից միայն մի քանիսը.

Խոսրովիկ, էջ 39-40[1]։ Ստորոգ. Արիստ., էջ 363[2]։

"Զի բնութեան հաւաքումն ի հառաբակին ըստ զօրութեան եւեթ է, ա-

"Գոյացութիւն է, որ իսկական, եւ նախկին, եւ մանաւանդ ասի. որ ոչ

1 Խոսրովիկ թարգմանիչ եւ երկասիրութիւնք նորին, աշխատաս. Գարեգին վարդապետի Յովսեփեան, Վաղարշապատ 1903։

2 Ստորոգութեանց բնագիրը, Վենետ. 1833։

նուամբ միայն նշանակեալ, իսկ յատանձնականուն ոչ ըստ զօրութեան, այլ ըստ ներգործութեան եւ արդեամբք երեւեալ։ Վասն որոյ եւ առաջին եւ իսկագոյն եւ մանաւանդ զսա անուանեցին զոյացութիւն վեհագոյնքն, եւ յորոց մերքն ընկալան զբանականութեանն վարժողութիւն, զի ի սմա գտին եւ ծանեան որպէս զանուն հասարակին, նոյնպէս եւ զիւանն»։

Խոսրովիկ, էջ 115–116:

«Զի ամենայն իրի սահման յերիցս յայսցանէ կատարի, ի մտածութենէ գոյին, եւ ի նոյն ինքն ի գոյին, եւ ի տեսութենէ եւ ի բառէն, որ սահմանէ զիրն, որպէս որ կամիցի զսահման մարդոյն բացայայտել, նախկին յարձակի մտաքն տեսանել զմարդն, եւ զնոյն մտացն տես եւ աչացն առաջի դնէ, եւ ապա բանիւ զնոյն սահմանէ ասելով՝ մարդ-կենդանի, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ»։

ՁԵՆԹԱԿԱՅԻ զուտքէ ասի, եւ ոչ ՆԵՆԹԱԿԱՅՈՂ յուտքէ»։

Ստորոգ. մեկն. (Ամենախ.)[1]:

«Յիրաւի ուրեմն զանհատ գոյացութիւնն իսկապէս եւ նախկին եւ մանաւանդ ասաց գՈՂ»։

Ելիաս., մեկն. Ստոր., էջ 83:

«Զիարդ ոչ է առաջին եւ իսկակոյն եւ մանաւանդ գոյացութիւն»։

Սահմ. իմաստ., էջ 121:

«Իսկ զինչէն կամ անուամբ ճանաչի մեզ՝ եւ կամ սահմանաւ։ Եւ անուամբ յորժամ տեսանելով ինչ՝ ասեմք զինչ է։ ասեմք թէ մարդ է։ Իսկ սահմանաւ՝ յորժամ ասեմք, կենդանի բանաւոր մահկանացու՝ մտաց եւ հանճարոյ ընդունակ»։

Վերոյիշեալ համեմատութիւնները չպէտք է հասկանալ այն մտքով, որ Խոսրովիկն օգտուել է համեմատութեան առնուած երկերից։ Արիստոտելեան իմաստասիրութեան այն մտքերը, որոնց հանդիպում ենք Խոսրովիկի երկերում, այնքան ընդհանուր ու սովորական են եւ այնքան յաճախ կրկնուած Արիստոտելեան թարգմանութիւններում, որ սխալ կը լինէր այս կամ այն գրուածքը կամ հատուածը համարել նրանց աղբիւր առանց որեւէ լուրջ հիմքերի։

Վերոյիշեալ համեմատութիւններից կարելի է ընդհանուր կերպով միայն եզրակացնել, որ Արիստոտելեան հնագոյն հայ թարգմանութիւնները Խոսրովիկի ժամանակ ութերորդ դարի սկզբում գոյութիւն են ունեցել եւ ծանօթ են եղել նրան։

ՊՐՈՖ. Ց. ՄԱՆԱՆԴՅԱՆ

Երեւան։

(Շարունակելի։)

[1] Վենետիկի հրատարակութեան մէջ Ստոր. մեկնութեան սկիզբը պակաս է։ Այս հատուածը առել ենք Էջմիածնի թ. 1810 ձեռագրից։

[2] Հմմտէ նաեւ Ներած. Պորփ., էջ 242, 3–5։

ԻՍԼԱՄԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Շարունակութիւն։)

—

[ԱՅՍ ԳԼՈՒԽԸ Մ. ՉԵՐԱԳՐԻ ՀԱՄԵՄԱՏ]

—

ՈՐՔ ԶՀԱՐ ԵՒ ԶԲԱՐԻ

Իսկ ոմանք յաւելոյն եւս յամբարշտութիւն, իբր փաղչելով ի ձախոյն, խոտոր(ին) ի յաջ կողմ. ասելով թէ պատճառն ամենայն բարեաց եւ չարեաց մերոց ոչ մեք, այլ է առաջին պատճառն աստուած. եւ զայս ասեն նոր հեթանոսք, որք են Տաճիկք. փաղչելով յառաջասացեալ բախտէ եւ ճակատագրէ, եւ փոխանակ նոցա յառաջին պատճառն վերագրեն զՀարին, զի մի լեցի(ն) երկու աստուածք, չար եւ բարի, ըստ Մանիքեսի, այլ մի եւ նոյն է պատճառ երկոցունցն, ասեն։

Այլ մեք՝ դասք ճշմարտայսիրութեան, հետեւողք ուղղութեան, ընդդիմանամք այսմ, ասելով թէ Աստուած ոչ է պատճառ չարեաց, այլ միայն բարեաց։

Նախ. զի բարին էութիւն է. ուստի յայտ է զի հակադարձին առ միմեանս. զի ամենայն որ բարիէ է, է. եւ ամենայն որ է է բարի է. իսկ չարն ոչ էութիւն է։ Արդ՝ Աստուած պատճառ էութեան է, եւ ոչ է ոչ էութեան. այլ՝ չարն ոչ է յԱստուծոյ։

Նախ. ասեմք առ այս. եթէ չարն յԱստուծոյ է, սիրէ զչարն, սիրէ եւ զչարագործն, որ է պատճառ չարեաց. այսինքն՝ զսատանայ. զի սատանայ տանջելոց է, որ պատճառ չարեաց։ Ապա ուրեմն՝ ոչ է չարն յԱստուծոյ։

Երկրորդ. եթէ չարն յԱստուծոյ է, կարութեամբ առնէ. թէ անկարութեամբ, ահա բռնադատեալ է. եւ եթէ կարողութեամբ առնէ զչարն, անկար է առնել զբարին։

Երրորդ. թէ չարն յԱստուծոյ է, ինքն բարի է (եւ) առնէ զչարն, թէ չար է որ առնէ զչարն, ահա հակառակ գործէ ինքեան. իսկ թէ չար, եւ առնէ զչարն, ոչ որ է յէակքս բարի։

Չորրորդ. թէ չարն յԱստուծոյ է, սկիզբն ամենայնի Աստուած է բարեաց եւ չարեաց. ապա ոչ է սկզբնաչարն՝ առաջին գտակն չարեաց, սատանայ, որպէս նոքա բարբանջեն։

Սակայն բեր զառարկութիւնն նոցա տեսցուք, զեղծումն նոցա յայտարեսցուք։

Որ եւ առարկեն. նախ. եթ (աստուած)